ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՈՐԴ ՍՈՒՐԵՆ ՌԱՖԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նոր աշխարհակարգի կայացման պայմաններում տեղի ունեցող քաղաքական զարգացումների տրամաբանությունը և պետական կառավարման արդյունավետության բարձրացման հրամայականները արդիական են դարձրել քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում: Անկախացումից ի վեր գտնվելով գաղափարական և արժեքային փոփոխությունների հորձանուտում ՀՀ քաղաքական էլիտան եղել և մնում է ինչպես ժողովրդավարական անցման, այնպես էլ անցումից – համախմբում գործընթացի իրականացման գլխավոր և պատասխանատու դերակատար: Հետևաբար, ՀՀ քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրների ուսումնասիրությունը հրամայական է երկրում առկա քաղաքական զարգացման ճգնաժամեի հաղթահարման, ժողովրդավարության որակի բարձրացման, ինչպես նաև անցումից – համախմբում հարացույցի իրականացման առանձնահատկությունների բացահայտման, քաղաքական, քաղաքացիական և պետականաշինության մշակույթների զուգամիտման, ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման առումով: Ակնհայտ է, որ հայ իրականությունում նմանօրինակ թեմայի գիտական ուսումնասիրությունը խիստ արդիական է, քանի որ հնարավոր չէ անցումից համախմբում գործընթացի աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, սոցիալ-հոգեբանական և գործառութակառուցվածքային արժեքաբանությունը դիտարկել առանց Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրների համակարգային վերլուծության:

Դրանով էլ պայմանավորված է Ս.Ռ. Պետրոսյանի ներկայացրած «Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ներկայացված ատենախոսությունը եզակի նախաձեռնություն է՝ համակարգված ուսումնասիրելու Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները: Անհրաժեշտ ենք համարում շեշտադրել նաև այն որ արդի գլոբալ և լոկալ անորոշությունները ևս պայմանավորում են թեմայի արդիականությունը, հատկապես վերջին տարիներին «քաղաքական էլիտա» եզրույթի նկատմամբ ցուցաբերվող պոպուլիստական մոտեցումներով և այդ համատեքստում քաղաքացիների իրավագիտակցությունում տեղի ունեցած պատրանքային փոփոխություններով:

Արդի քաղաքական գիտության զարգացման շրջանակներում թեմայի համալիր հետազոտությունն առանձնահատուկ կարևորվում է ժողովրդավարական անցումից համախմբում հարացույցի ռացիոնալ կիրառելիության չափումներով: Այս դիտանկյունից ուշագրավ եմ համարում աշխատանքի հեղինակ Ս. Պետրոսյանի պնդումը առ այն, որ ժողովրդավարական անցման երկրներում քաղաքական զարգացման ճգնաժամերը հնարավոր է հաղթահարել միայն այդ հիմքով: Ավելին այդ տեսական մոտեցման կիրառելիության անհրաժեշտությամբ հեղինակը իշխանության իրականացման և իշխանական հարաբերություններում լինելու նոր մեխանիզմներ է մշակել՝ փաստարկելով ՀՀ-ում բնականոն արդիականացման արժեքաբանության սկզբունքների և քաղաքական կարգի գործառնականության զուգամիտման հրամայականները: Այս համատեքստում էլ արդի քաղաքական զարգացումների անորոշության և տուրբուլենտության բարձր մակարդակի կանխումը հեղինակը հիմնավորել է արդյունքի կառավարման, հանրային համակեցության, սոցիալական պատասխանատվության, ընդաձակված օրակարգով անվտանգության ապահովման փոխպայմանավորվածությամբ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, վերլուծված է նրա տեսական և գործնական նշանակությունը, ուսումնասիրության մեթոդները, շարադրված են նրա

նպատակներն ու խնդիրները, մատնանշված է աշխատանքի գիտական նորույթը, կարևորված է տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության՝ **«Էլիտաների ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմքերը. Անցում-համախմբում հարացույցի կայացման տիրույթներում»** խորագրով երկու ենթագլուխներից բաղկացած **առաջին գլխում** հեղինակը ուսումնասիրել է էլիտաները, որպես քաղաքական զարգացման գլխավոր դերակատարներ և քաղաքական էլիտայի հավաքագրման առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբման համատեքստում: Այդ դիտանկյունից հիմնավորվել է մոտեցում, որ, քաղաքական զարգացման ճգնաժամերի և անորոշությունների հաղթահարման, ինչպես նաև քաղաքական համակարգի բնականոն արդիականացման գործընթացներում էլիտաների դերը գերակա է: Այսպիսի մոտեցման շրջանակներում Ս. Պետոսյանը համոզմունք է հայտնել որ բնականոն արդիականացումը լինելով որակական փոփոխությունների պարույրային գործընթաց ենթադրում է էլիտա – հասարակություն և էլիտա – էլիտա փոխհարաբերությունների շարունակական կերպափոխում: Սկզբունքորեն համաձայն ենք Ս. Պետրոսյանի այն մոտեցման հետ, որ այդ բազմամակարդակ գործընթացում որոշիչ նշանակություն ունի քաղաքական էլիտաների հավաքագրման ձևը, նրանց ներկայացրած արժեքային համակարգը, սոցիալական բազան, ինչպես նաև իշխանության իրականացման նախագծի տրամաբանությունը:

Համալիր ուսումնասիրելով «քաղաքական էլիտա» եզրույթի սոցիալ-հոգեբանական և ինստիտուցիոնալ չափումները՝ ատենախոսության հեղինակը հիմնավորել է ժողովրդավարական անցումից համախմբումը ՝ որպես ռազմավարական ապագայի և փոփոխության կառավարման բազմավեկտոր գործընթաց: Այս մոտեցումն արժեքավոր է, քանի որ հեղինակը, քննադատելով գծային ազատականացման քաղաքականությունը ՀՀ-ում ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացը ներկայացրել է որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման միակ հնարավորություն: Այդ նկատառումներով հեղինակն ուսումնասիրել է քաղաքական արդի մարտահրավերներով պայմանավորված պետականաշինության մշակույթի զարգացումը

որպես ՀՀ քաղաքական էլիտայի ազատության և պատասխանատվության ինստիտուցիոնալացման և ժողովրդավարական համախմբման կայացման բաղադրիչ:

Ատենախոսության **«Քաղաքական էլիտայի կերպափոխման բազմավեկտորությունը Հայաստանի Հանրապետությունում»** վերնագիրը կրող և երեք ենթագլուխներից բաղկացած **երկրորդ գլխում** ատենախոսը քննության է առել Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը ժողովրդավարական անցման հարացույցի շրջանակներում: Ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման սահմանադրաիրավական հիմքերը՝ համեմատության մեջ վերլուծելով 1995 թ.-ին ընդունված, ապա 2005 և 2015 թվականներին փոփոխված սահմանադրության առանձնահատկությունները: Ընտրական գործընթացը դիտարկելով, որպես քաղաքական էլիտայի կերպափոխման ինստիտուտ՝ համակողմանի վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում անցկացված բոլոր համապետական ընտրությունները: Կարևորված է այն փաստը, որ եթե ընտրական գործընթացը կրում է արարողակարգային բնույթ և ընթանալով «կանխավ հայտնի արդյունքներով» միտված է միայն քաղաքական վերնախավի վերարտադրությանը, ապա անհնար է դառնում պարբերաբար դրսևորվող քաղաքական զարգացման ճգնաժամի (բաշխման, շարժունակության, մասնակցության, ինքնության, լեգիտիմության) հաղթահարումը: Որպես «բարեհաջող ձախողում» այն այդպիսին շարունակում է մնալ կանխորոշված ընտրությունների արդյունքների արարողակարգային ապահովման և քաղաքական ուժերի միջև դերային դասավորությունների պատրանքային լեգիտիմության և մարգինալ արդիականացման գործընթաց:

Հիմնավորվել է մոտեցումը, որ ընտրական գործընթացը, որպես էլիտայի կերպափոխման ինստիտուտ ունի կենսական նշանակություն Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի արդիականացման և քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման համար, որը նվազեցնելով քաղաքական անորոշություններն ու տուրբուլենտությունները, բացառում է նաև լայն զանգվածների հեղափոխականացվածությունը:

Այս դիտանկյունից կարևորված է ժողովրդավարական համախմբման արժեշահային համակարգի հաստատման գործընթացի ինստիտուցիոնալացման, սոցիալ-հոգեբանական, քաղաքակրթական և մարդաբանական գործոնները ՀՀ-ում: Վերլուծելով **ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի առանձնահատկությունները՝** Ս. Պետրոսյանը բացահայտել է այն գործոնները, որոնք ազդել են ՀՀ ժողովրդավարացման գործընթացի վրա: Ատենախոսը համոզված է, որ, պայմանավորված անցման գծային ազատականացմամբ և քաղաքական զարգացման տևական ճգնաժամերով ՀՀ-ում անցումից համախմբում գործընթացները ձգձգվել են՝ ստեղծելով սպասումների հիասթափություն: Վերջիններիս հաղթահարման համար ուսումնասիրված է ՀՀ-ի էլիտաների որպես պատասխանատվության սուբյեկտների գործունեության **ինստիտուցիոնալացման** անհրաժեշտությունը՝ հատկապես հանրային քաղաքականության աստիճանակարգային և ցանցային կառավարման զուգամիտման պայմաններում:

Երրորդ՝ «**Հայաստանի Հանրապետությունում թավշյա հեղափոխությունը որպես քաղաքական էլիտայի ժողովրդավարական կերպափոխման հրամայական**» ենթագլխում ատենախոսը ուսումնասիրել և հիմնավորել է մոտեցում առ այն, որ ՀՀ քաղաքական էլիտան ժողովրդավարական որակի ապահովման երաշխավոր է: Այդ դիրքորոշումը հիմնավորելու նպատակով ուսումնասիրված է ՀՀ «թավշյա հեղափոխությունը» որպես «երկրորդ անցման» սկիզբ, որի ընդունելի ելք է ակնկալվում քաղաքական էլիտայի կողմից ժողովրդավարական որակի երաշխավորումը (էջ119): Այս համատեքստում ուշագրավ է հեղինակի այն մոտեցումը, որ ՀՀ-ում «արդիականացում առանց զարգացման» հարացույցի կիրառման հետևանքով հաստատվել է «բարեհաջող ձախողում» (successful failure) երևույթը՝ հանգեցնելով պետական և քաղաքական ինստիտուտներում անձնավորման, կլիենտելիզմի և հովանավորչական հարաբերությունների ձևավորման ու խորացման:

Ատենախոսը ամբողջացնելով քաղաքական էլիտայի կերպափոխման տեսական և գործնական հիմքերը և վերլուծելով հասկացության կառուցվածքային ու բովանդակային բաղկացուցիչները՝ առաջարկել է «**քաղաքական էլիտայի կերպափոխման ճգնաժամ**» նոր եզրույթը: Հեղինակը այն սահմանել է, որպես

քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման և պետության ինստիտուտի բնականոն արդիականացման գերակայության շրջանակներում քաղաքական էլիտաների մարդաբանական, ռացիոնալ-իրավական և սոցիալ-հոգեբանական մակարդակներում համարժեք կերպափոխման անկարողության հետևանք:

Ուշագրավ եմ համարում նաև հեղինակի այն մոտեցումը, որ տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների հարատև զագացման արդյունքում արմատական կերպափոխումներին հավասարարժեք չարձագանքող էլիտաները զրկում են երկիրը ռազմակարական նպատակամետ կառավարումից:

Նշենք, որ ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առաջադրված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններում հանրագումարի են բերվել հիմնական արդյունքները, կատարվել են հայեցակարգային բնույթի եզրահանգումներ ու ընդհանրացումներ:

Մեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և հանդիսանում է նրա հիմնական դրույթների նույնական արտացոլումը:

Ատենախոսությունն աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և տրամաբանական հաջորդականությամբ: Ատենախոսությունը գրագետ շարադրված, գիտավերլուծական բովանդակությամբ, հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Ուսումնասիրելով թեմային վերաբերվող օրենսդրական դաշտը, համապատասխան փաստաթղթեր, հարուստ գրականություն՝ հեղինակը կարողացել է արդի մարտահրավերներից ելնելով վերլուծության ենթարկել ՀՀ քաղաքական կերպափոխման գործընթացները՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում անցում-համախմբում գործընթաց իրականացնելու արժեշահային բազմաչափությունից: Ս.Ռ. Պետրոսյանի ատենախոսությունում բարձրացված հարցադրումները վերլուծել է պատշաճ գիտական մակարդակով և համապատասխան ընդհանրացումներ է կատարել: Հեղինակի կողմից հրապարակված յոթ գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Բարձր գնահատելով գրախոսվող աշխատանքը և նկատի ունենալով թեմայի բազմաշերտությունն ու բարդությունը՝ հարկ ենք համարում կատարել մի շարք դիտո-

ղություններ, որոնք անմիջականորեն առնչվում են ատենախոսության առանձին հարցադրումների հետ.

1. Հեղինակը ատենախոսության առաջին գլխում ուսումնասիրել է անցումից համախմբում գործընթացը որպես քաղաքական զարգացման մոդել: Հետահայաց վերլուծությունից և ՀՀ ժողովրդավարական անցման հետևանքներից ակնհայտ է որ հայ իրականությունում վերնախավը ոչ միայն հրապուրվել է գծային ազատականացմամբ, այլև ռեալ չի վերլուծել ՀՀ –ի զարգացման և բնականոն արդիականացման ռազմավարական հիմնախնդիրները: Ուստի, կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը առանձին ենթագլխով հանգամանալից ներկայացներ քաղաքական զարգացման մոդելի իրականացման խաղային բնույթի առանձնահատկությունները հետխորհրդային երկրներում:

2. Ատենախոսությունում հիմնավորված է մոտեցում, որ բնականոն արդիականացումը էլիտա – հասարակություն և էլիտա – էլիտա փոխհարաբերությունների որակական փոփոխությունների շարունակական կերպափոխման գործընթաց է: Սկզբունքորեն համաձայն ենք Ս. Պետրոսյանի այդ մոտեցման հետ, բայց գտնում ենք, որ այդ բազմամակարդակ գործընթացում գերակա նշանկություն ունի էլիտայի կողմից պետականաշինության և քաղաքացիական մշակույթի սկզբունքների ներդրման և կարևորման գործընթացը: Ուստի, նպատակահրմար կլիներ որ աշխատանքի երրորդ գլխի երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքական էլիտան, որպես քաղաքական մշակույթի ժողովրդավարացման պատասխանատու» ենթագլուխը նվիրված լիներ նշված հիմնախնդիրներին:

3. Աշխատանքի առաջին գլխից ատենախոսությունում խոսվում է ԱՄՆ քաղաքագետ Ռ. Դալի պոլիարխիկ էլիտայի հայեցակարգային խնդիրների մասին. նախ՝ այսօր այն քննադատվում է՝ մերկապարանոց կիրառման համար, քանի որ անտեսվեց ռազմավարական էլիտայի դերը (Սյուզան Կելլեռ), բացի դրանից հետխորհրդային կերպափոխությունները ակտիվ վերլուծվում է ըստ Ռ. Միխելսի՝ «խմբիշխանության երկաթյա օրենքը» տեսության շրջանակներում: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում նշել, որ նպատակահարմար կլիներ ՀՀ ընտրությունների ինստիտուտի կայացումը դիտարկվեր նշված մոտեցումների

զարգացման հրամայականների համատեքստում՝ որպես քաղաքական և քաղաքացիական ազատությունների համադրման, անպատասխանատու ազատության մերժման, չհիմնավորված նկրտումներով ինքնահաստատման հակված բողոքի կրիչ անհատների սոցիալական տարածության ցանցային գործառման: Համոզված ենք, որ ՀՀ-ում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը միայն սահմանադրաիրավական հիմքերով մեկնաբանելը չի ամբողջացնում առկա պատկերը:

4. Անհրաժեշտ ենք համարում ընդգծել որ ՀՀ-ում վերջին տարիներին տեղի ունեցած քաղաքացիական շարժումներն ակնհայտ ցույց են տալիս, որ նրանք հաճախ ունենում են մարգինալ բնույթ: Այս առումով աշխատանքը կշահեր, եթե հեղինակը կարևորեր այն խնդիրը, թե ինչպես քաղաքացիական մշակույթի զարգացման միջոցով սոցիալականացնել և վերասոցիալականացնել երիտասարդությանը՝ բարձրացնելով նրա գիտակցված մասնակցությունը քաղաքական և քաղաքացիական գործընթացներին:

5. Էլիտայի կերպափոխումը գործընթաց է, այն ենթադրում է սերնդափոխություն, հագեցված գաղափարական առումով սեփական մարդաբանական, քաղաքակրթական տեսակի ինքնահաստատման, ինքնիրացման և ինքնաներկայացման հիմքի վրա կենսաքաղաքականության մշակում: Աշխատանքը կշահեր եթե հեղինակը այս բարդ գործընթացը դիտարկեր որպես ՀՀ-ում կենսաքաղաքականության մշակման և իրականացման բաղադրիչ:

Վերոհիշյալ դիտողությունները կհարստացնեին ատենախոսությունը՝ հնարավորություն տալով հեղինակին բացահայտելու անցման գծային և համախմբման բազմավեկտոր գործընթացների զուգամիտման հրամայականները, որոնք պայմանավորված են շարունակական բարեփոխումների անընդհատությամբ: Այդուհանդերձ, Ս.Ռ. Պետրոսյանը իր առջև դրված խնդիրներն ու նպատակները կատարել է լիովին: Ատենախոսությունում առկա է ինչպես գիտական նորույթը, այնպես էլ համապատասխան առաջարկություններն ու եզրահանգումները:

Նորագույն գրականության և իրավական-նորմատիվային ակտերի հիման վրա Ս.Ռ. Պետրոսյանը լուծել է իր առջև դրված նպատակներն ու խնդիրները: Ատենախոսությունում առկա եզրակացությունները տեսական են, իսկ կատարված

առաջարկություններն ունեն կիրառական նշանակություն: Հատկապես ուշադրության է արժանի ժողովրդավարության որակի արժեքաբանության տիրույթներում քաղաքական էլիտայի կերպափոխումը անցյալ- ներկա- ապագա եռաչափության մեջ դիտարկելը, որը զերծ կպահի տվյալների մեխանիկական ներմուծումից և քաղաքական ժամանակը և տարածությունը չարտացոլող մոդելների լեգիտիմացումից (էջ 122):

Աշխատանքը գրված է գրագետ հայերենով, լեզվամտածողությունը գիտական է, հետազոտվող նյութը՝ փաստարկված: Ատենախոսության հիմնական տեքստում և սեղմագրում կատարված առաջարկություններն ու եզրակացությունները համապատասխանում են թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության մեջ ներկայացված տեսական և կիրառական եզրահանգումներն ու առաջարկությունները:

Թեմայի արդիականությունն ու շարադրանքի կուռ տրամաբանությունը, հետազոտության հեղինակի գիտական բարեխղճությունը, ինչպես նաև հիմնավորված եզրահանգումները և առաջարկությունները հնարավորություն են տալիս փաստելու, որ Ս. Պետրոսյանի **«Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը ամբողջությամբ բավարարում է սույն կարգի աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,
բ. գ. դ. , պրոֆ. **Ա. Փ. Ենգոյան**

Ս. Ռ. Պետրոսյանի ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, բ. գ. դ. , պրոֆ Ա.Փ. Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար,
բ. գ. թ. , դոց. **Մ. Վ. Հովհաննիսյան**

18. 04. 2025թ.